



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Յո-նո-ար

2013
Ս. Էջմիածին



ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԼԱՎՐԵՆՏԻ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

**«ԽԱՂՈՂ» ՆԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴԱՇՏԻ ՆԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Նուագիտական փվյալները հաստատում են, որ Նայաստանը եղել է ինչպես վայրի խաղողի, այնպես էլ խաղողի ընտանեցման հիմնական տարածք: Եղեգիս գետի վերին հոսանքներում հայտնաբերված խաղողի բրածո տերևների դրոշմները 4-5 միլիոն տարվա վաղնեություն ունեն, իսկ Վաղարշապատից ոչ հեռու գտնվող Առաքաշենի նեոլիթյան բնակատեղից հայտնաբերված գրածոները թվագրվում են Ք. ծ. ա. Չ. հազարամյակի առաջին կեսով¹: «Մշակովի խաղողի տեղական տեսակների բուծման հնագույն կենտրոն է եղել Արարատյան դաշտը: Այդ մասին են վկայում Թեյշեբախի քաղաքի (Կարմիր բլուր) գինու պահեստներից հայտնաբերված խաղողի կորիզները: Կարմիրբլուրյան եւ ժամանակակից խաղողի կորիզների ձևաբանական ընդհանրությունները ցույց են տալիս, որ Արարատյան դաշտի ներկայիս խաղողի տեսակները Ք. ծ. ա. Է. դարում Թեյշեբախիում մշակվող խաղողի ժառանգներն են»²:

Վերջերս «Արենի-1» քարայրում հայտնաբերված նյութերը հաստատում են, որ ոչ միայն խաղողի մշակությունը, այլև գինեգործությունը զարգացման բարձր մակարդակ է ունեցել արդեն Ք. ծ. ա. Ե. հազարամյակի վերջերից:

Խաղողի, խաղողագործական մշակույթի վաղնջական ակունքներ ունենալը տրամաբանորեն ենթադրում է այդ հասկացությունների հետ կապված հնագույն անվանումների գոյություն, որը եւ հաստատվում է մատենագրական փվյալներով, այդ անվանումների ստուգաբանություններով: Նկատի ունենք խաղողենու եւ խաղողի գանազան տեսակների, նրանց մասերի բազմաթիվ անվանումները, որոնց մի մասը հ.-ե. ծագում ունի, մյուսները հին լեզուներից անցած բառեր են: Դրանց պետք է հավելել գրաբարյան մատենագրության մեջ չվկայված, բայց բարբառներում առկա մի շարք բառեր, որոնք պետք է ներառել հայերենի հնագույն բառաշարի մեջ:

Այս հոդվածում նման կարգի բոլոր բառերին անդրադառնալը նպատակահարմար չենք համարում. կնշենք միայն մի բանիսը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում կիրառության ժամանակաշրջանի, բառիմաստի, ստուգաբանության եւ բառաքննական նոր դիտարկումների առումով:

1 Տե՛ս Ս. Նորությունյան, Ա. Քալանթարյան, Ն. Պերպոյան, Գ. Մարգարյան, Ն. Մելքոնյան, Ս. Նորության, Պ. Ավետիսյան, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 14:

2 Անդ, էջ 18:

Աղուրի - Ըստ Արմավրական բառարանի՝ «որթի փաշտաթաղ անելու ճիւղը»³: Բառարանում այն ստուգաբանված չէ: Նր. Աճառյանը գրում է. «Ջարմանայի է, որ բառս պահում է Այնթապի թրքախօս հայոց մէջ **ախրրա**, **ախուրա** ձևով... ուրիշ փոքր չեմ պատահած այս հագուստի բառին»: Գ. Ջահուկյանը նույնպես բառի ծագումը անստույգ է համարում⁴ (Պարսկերենում եւ Ղարաբաղի բարբառում **դօրա** «խակ խաղող»-ը կապ ունի՝ արդյոք **աղուր**-ի հետ):

Բառի վերաբերյալ ուշագրավ դիտարկում ունի պարմաբան Սարգիս Պերրոսյանը: «Աղուրի-ն արմավակիցն է աղօշ/աղոշ «խաղողի որթի նորածիլ ուղեշ» բառի: Սրանց արմարը ծագում է հ.-ե. ***al** - «աճել, աճեցնել, սնել» նախաձևից: **Աղուրի** բառում արմարին հավելվել են **-ուր** (հմմտ. բլուր, հանուր, մրուր, փշուր եւ այլն) եւ **-ի** վերջածանցները: Վերջինս նաեւ բուսանվանական վերջածանց է»⁵:

Նոդինակի կարծիքով այդ բառն ունի նաեւ փեղանվանական կիրառություն, որը հայերի է սեպագիր փոքրերից: «Մ. թ. ա. 713 թ. Ուրարտու ներխուժած Ասորեստանի Սարգոն 2-րդ թագավորը Վանա լճի ավազանում հիշատակում է **Alluria** անունով գետը, իսկ ավելի հարավ... **Alluria** անունով լեռ: Ըստ երևույթին, Alluria գետը Վանա լճին հարող խաղողաշար եւ գինեվեր (մինչեւ Մեծ Եղեռնը) գավառներից որեւէ մեկում է գտնվել»⁶:

Արգասի - «որթափունսիկ երած ճյուղերը»: Բառը գրանցված չէ Նայկագյան բառարաններում: Արմ-ը բնագրային օրինակ չի բերում եւ նշում է բարբառային **արթասի** ձևը: Գ. Ջահուկյանը հավանական է համարում հ.-ե. ծագումը ***ur**՝ «ճյուղ, արմար»-ից՝ նշելով, որ **այգի**, **գինի**, **որթ**, **արգասի** անվանումները խոսում են խաղողագործության՝ վաղնջահայերին ծանոթ լինելու մասին»⁷:

Շիւ - «խաղողի կույրերն ու կեղեր, ճմռած խաղողի մնացորդը»: Բառը բարբառներում ունի նաեւ «մարդաշ, դալար ճյուղ» իմաստը (Արմ.): Վկայությունը «Գիրք վասպակոց»-ից է (միջինհայերենյան շրջանի): Արմ-ում բառը ստուգաբանված չէ: Ն.-ե. ծագումը հաստատվում է Պ. Բեդիրյանի ստուգաբանությամբ՝ հ.-ե. ***scip** - «գավազան, բարակ ճյուղ»: Այդ արմարի հետ է կապվում եւ **շիւղ**-ը⁸:

Որթ - «խաղողի փունսը»: Նաճախական գործածություն ունի գրաբարում, ենթադրելի է նաեւ վաղնջահայերենյան գործածությունը: Նր. Աճառյանը բառը դիտում է որպես հ.-ե. ***porthu**- «հորթ, երինջ, փոքր երեխա» հայ. **որթ** «հորթ, մոզի» իմաստի զարգացում, այնուհետեւ գրում. «նշանակութեան զարգացման համար հմմտ. յարկա-

3 Տե՛ս Նր. Աճառյան, Նայերեն արմավական բառարան (այսուհետեւ՝ Արմ.), հ. 1, Երեւան, 1971, **Աղուրի** բառահոդվածը:

4 Տե՛ս Գ. Ջահուկյան, Նայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 39:

5 Ս. Պերրոսյան, Արարադյան լեռների հին անունների եւ անվանադիրների մասին. «Պարմաբանասիրական հանդես» (այսուհետեւ՝ ՊԲՆ), Երեւան, 2010, թ. 3, էջ 224:

6 Տե՛ս նաեւ:

7 Գ. Ջահուկյան, Նայոց լեզվի պարմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 156, 263:

8 Պ. Բեդիրյան, Մի քանի ստուգաբանություններ. ՊԲՆ, 1962, թ. 2, էջ 144:

պես հյ. **երինջ**, որ բուն նշանակում է «հորթ, կովի ձագ (էգր)», բայց Երեւ. նաեւ «խաղողի որթի մաս»⁹: Նման անցում կա եւ հունարենում¹⁰:

Անկախ նախաձեռների բնույթից՝ բոլոր դեպքերում բառի բնիկ հայերեն լինելը կասկածից դուրս է:

Ուռ - Ըստ Նոր հայկազյան բառարանի՝ «Բարունակ որթոյ, շառաիղ, ուղէշ, ընծիւղ, ոսպ որեւէ փնկոյ»¹¹: Արմ-ը «խաղողի որթի մաս, ճյուղ» իմաստը չի առանձնացնում, այլ բնդհանրական «ճիւղ, ընծիւղ»: ՆՏԲ-ն ավելի ճիշտ է բառի բացատրության հարցում, եւ բերված վկայությունների շարքում հենց առաջին օրինակներում **ուռ**-ը «խաղողի որթի մաս, ճյուղ» իմաստով է: «Ես եմ որթ եւ դուք ուռ», «հասրին անտի ուռ որթոյ եւ ողկոյզ մի խաղողոյ ի նմա», «ուռք ողկուզաբերք ճշմարիտ որթոյն»:

Գ. Զահուկյանը հնարավոր է համարում բառի հնդեւրոպական ծագումը¹²:

Եւսն մի շարք բառեր, որոնք Արմ-ում ստուգաբանված չեն:

Տոլի - «խաղողի որթ»: Վկայությունները միջինհայերենյան շրջանից են: Եւթադրվում է կապը ուրարտերեն **սուսի**-ի հետ: Վերջինս Ղափանցյանը մեկնում է «խաղող», Մելիքիշվիլին եւ Դյակոնովը՝ «խաղողի այգի»¹³: Գ. Զահուկյանը նկատում է. «Եթե որոշ փարաժներում ուրարտական ձայնեղները հայերենում արտացոլվել են ինչպես խուլեր, ապա հնարավոր է հայ. **փոլի** (փոյլի) «խաղող բառի ծագումը ուրարտ. **սուսի** (**սուսի** «խաղողի այգի, խաղող» բառից)»¹⁴:

Իր «Ստուգաբանական բառարան»-ում հեղինակը փաստորեն մերժում է այդ կապը. «Նազիվ թե կապ ունենա ուրարտ. **սուսի** (**սուսի**) «խաղողի այգի» բառի հետ (փոխառություն), հմմտ. նաեւ ուրիերեն **տս** «խաղող» (էջ 731):

Տորր - Ըստ ՆՏԲ-ի՝ «շառաիղ բուսոց եւ փնկոց. մանաւանդ բազում որթոյ խաղողոյ»: Գ. Զահուկյանը բերում է բառի ինթա-լուսական համապատասխանները¹⁵, իսկ «Ստուգաբանական բառարան»-ում հնարավոր է համարում **տարր** բառի ձայնդարձային փարբերակը հ.-ն. ***der** - «քերթել, ճեղքել» արմարից (էջ 734):

Վազ - «խաղողի վազ, որթ»: Արդի հայերենում գործածական այս բառը վաղ գրաբարյան շրջանից վկայություն չունի: Առաջին վկայությունը թերեւս Վարդան Այգեկցուց է. «Եւ կտրեց գխաղողին վազն եւ կուծն լցեց գինով»¹⁶:

Նր. Աճառյանը **վազ**-ը համարում է **վազել** «ցարկել, դուրս ցարկել» բայահիմքի իմաստային զարգացում՝ համեմատելով ռուս. **побер** «զլխատր արմարի կողքից ծլած երկրորդական ճիւղեր, որ յառաջանում է» **побер** «փախչիլը, փախուստ», **бегать** «վազել, փախչել» բայից: Իմաստային այդ կարգի անցում կա եւ գերմաներենում¹⁶:

9 Տե՛ս Արմ., **Որթ** բառահոգվածը: Գ. Զահուկյանը նշում է հ.-ն. ***ortho** - ձեւը (1987, էջ 141):

10 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, Երեւան, 1981, **Ուռ** բառահոգվածը (այսուհետեւ՝ ՆՏԲ):

11 Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. բառարան, էջ 751:

12 Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 428:

13 Անդ, էջ 432:

14 Անդ, էջ 320:

15 Տե՛ս Ռ. Ղազարյան, Ն. Ավերիսյան, Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009, էջ 724:

16 Տե՛ս Արմ., **Վազ** բառահոգվածը:

Վազ(ել)-ը համարում են հին իրանական փոխառություն՝ հ.- ե. **veg h-*ից¹⁷: Եթե բացառելի է հ.- ե. նշված արմարից հայ. **վազ**-ի անմիջական կապը, ապա գոնե **վազ** «խաղողի որթ»-ը պետք է համարել հայերենի նորամուծություն:

Ինչպես արդեն նշել ենք, այս իմաստային դաշտին վերաբերող բազմաթիվ բառեր կան եւ բարբառներում: Անդրադառնալով մի քանիսին, որոնք, մեր կարծիքով, որոշակի հեղափոխություն են ներկայացնում բառաձևերի, գործածության վաղ ակունքներ ունենալու, նախնական իմաստների առկայության եւ մի շարք այլ առումներով¹⁸:

Բանակ - «այգիների թմբերի շարքը, որոնց վրա տնկվում են վազերը»: Կարելի է դիտել **բանակ** «մարդկանց խումբ, շարք»-ի իմաստային զարգացում, որը կապարվել է հայերենում:

Գաւազան - «որթափունիկի մաքր կամ վազ, որ նոր են տնկվում՝ փոս» (Արմ.): Ղա-րաբաղի բարբառի **կ'վա'զան** ձևը հուշում է, որ բառը գործածության հին ակունքներ ունի:

Թ-անազ - «խաղողի փունկ, որթ, վազ»: Սյր. Մալխասյանը փորձում է կապել այս. **tane-** «ծառի բուն»-ի հետ: Եթե կապը, իրոք, ճիշտ է, ապա հայերենի բառաձևը ավելի հին է, եւ փոխառությունը պետք է կապարված լինի միջինիրանական լեզուներից (միջինիրանական լեզուների **ak(ag)** ածանցը նոր պարսկերենում հիմնականում փոխվում է **e-**ի (**nāmak-nāme...** եւ այլն):

Թ-ելեկ - Սյր. Մալխասյանը մեկնում է. «Խաղողի որթի սարփինայ, որի վրա որթի թելերը գալիս հանգչում են»: Բառի երկու բաղադրիչներն էլ հ.- ե. ծագում ունեն:

Խնդողը - «խաղողի տեսակ»: Աճում է հիմնականում Արցախի տարածքում: Ամենայն հավանականությամբ խընդ/խինդ արմարը հ.- ե. ծագում ունի¹⁹:

Կռեկ - «վայրի խաղողի մի տեսակ, կյոթիկ, սեւ գույնով»: Ս. Պերոսյանը բառի առաջին բաղադրիչը համարում է հայերեն **կյուռ** արմարը՝ առնչելով ուրարտ. **Quria** տեղանվան հետ. «Այս տեղանունը... անխաղի կապի մեջ է... տնկության առաջա-տար ճյուղերից մեկն հանդիսացող խաղողագործություն-գինեգործության հետ: Տեղանունը տրոհվում է **qur-** եւ **-ia** բաղադրիչների: Սրանցից առաջինի համարժեքն է հայ. * **կյուռ** - արմարը, իսկ երկրորդին՝ **-ի** վերջածանցը: Ըստ այսմ, **Quria** տեղանվան համարժեքն է հայերեն **կյուռի** բառը, որը ծածկաբար նշանակում է «գինի»»²⁰:

Շալ - «խաղողի ճիւղ»: Նույն արմարի տարբերակն է **շաղ**-ը «մաքուղա ճյուղ»: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում հ.- ե. ծագումը²¹:

17 Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. բառարան, էջ 701: Որպես իմաստային զուգահեռ՝ հեղինակը բերում է **ոսր** եւ **ոսպոն** բառերը:

18 Նույնը քաղել ենք հիմնականում Սյր. Մալխասյանի «Հայերեն բացառական բառարանից», հ. 1-4, Երևան, 1944:

19 Տե՛ս Արմ., **Խինդ** բառահոլովածը:

20 Ս. Պերոսյան, Գևորգի նախադարձական փոխմի եւ գինու պաշտամունքի շուրջ. ՊԲՆ, 1999, թ. 2-3, էջ 176:

21 Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 314:

Քրնթեմնը - «խաղողի փոքր ողկույզ՝ հափիկները թափված»։ Գործածական է Ղարաբաղի բարբառում։ Գ. Զախովյանը բացատրելի չի համարում **հ.- ե.** ծագումը²²։

Այժմ **խաղող** բառի մասին։ Այդ բառի ծագումը պարզ չէ։ Նսրակ է մի բան, որ այն **հ.- ե.** ծագում չունի, կամ **հ.- ե.** ծագումը փաստարկված չէ։ Բնականաբար, հարց է առաջանում. լինելով խաղողի մշակության և խաղողագործության, գինեգործության հազարամյակների վաղեմության փարածք՝ ինչո՞ւ հայերենը չունի **խաղող** հասկացության **հ.- ե.** (բնիկ հայերեն) անվանումը։

Մեր դիպարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ վաղնջական ժամանակներում նման անվանումներ եղել են և մարենագործության մեջ պահպանվել են։ Նախքան դրանց անդրադառնալը՝ նկատենք մի իրողություն։ Ես։ Ինչքան էլ զարմանալի է, գրաբարում **խաղող** բառը հաճախական չէր, թեև առաջին վկայությունները Ե. դարից են։ Բառը չեն գործածել Կորյունը, Եզնիկը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին։ Ազաթանգեղոսը և Փարպեցին վկայել են մեկական օրինակ։ Ներքինգերորդդարյան հեղինակներից **խաղող** բառը չեն վկայել Սեբեոսը, Ղևոնդը, Դրասխանակերպոցին, Ասողիկը։

Աստվածաշնչում **խաղող**-ը վկայված է 25 անգամ։ Ձեռքի տակ չունենալով Ս. Գրքի հունարեն համաբարբառը՝ **խաղող** բառի գործածությունները համեմատել ենք Աստվածաշնչի ռուսերեն համաբարբառի հետ։ Վերջինում արձանագրված է 42 կիրառություն²³։

Բերենք երկու օրինակ, որտեղ հայերեն բնագրում **խաղող** բառը չկա։ «Կթեցին զայգիս իրեանց» (Դավ. Թ. 27), ռուս. **«собирали виноград»**։ «Կթեցէք, կթեցէք, ճռաբաղ արարէք զմնացորդսդ Իսրայելի» (Երեմիա Զ. 9), ռուս. **«до конца доберут остаток Израиля, как виноград, работай рукою твоею, как собиратель винограда»**։ Այս կարգի օրինակների «անհամապատասխանությունը» բացարկելի է. հայերենում «խաղող» իմաստը «թաքնված է» **այգի, ճռաբաղ** և նման այլ բառերում, որոնք զուր «խաղողային» հասկացություններ են։

Ուշադրություն դարձնենք մի փաստի։ Ես։ Նայերենում պարզապես (մրգաբու) ծառանունները կազմվում են **-ի** կամ **-ենի** ածանցներով (արմաննի, թզենի, նշենի...)։ Գրաբարում **խաղողենի** վկայված չէ։ ՆՆԲ-ն բերում է մեկ վկայություն միջինհայերենյան շրջանից. «Տայ գիովութիւն քափուրի, որ ի հնդիկս ի մէջ խաղողենոյ հանեն»։

Խաղողենի, խաղողի չկա նաև բարբառներում (համեմատելու արձանագրված չէ «Նայոց լեզվի բարբառային բառարան»-ում)։

Կարելի է հավաստել, որ նախագրաբարյան շրջանում (մթագնված ձևով նաև գրաբարում) **խաղող** հասկացությունն են արտահայտել հետևյալ բառերը.

1. **Գինի** - նախ նշենք, որ **հ.- ե.** և ոչ հնդեվրոպական մի շարք լեզուներում **գինի** և **խաղող** հասկացությունները նույն արմատով կազմություններ են. հմմտ. ֆրանս. **vin**

²² Անդ։

²³ Stii u "Симфония к синодальному изданию Библии", Стокгольм, 1995։

«գինի», *vine*՝ 1. «խաղողի բերք», 2. «պտղապտու ճյուղ», հին սլավ. вино «գինի», եւ «խաղողի որթ», ռուս. вино «գինի» - виноград «խաղող» եւ այլն:

Գրաբարի բառարանները **գինի** «խաղող» կամ «խաղողենի» իմաստը չեն արձանագրում: Այս իմաստները հաստատվող մատենագրական անհերքելի փվյալներ նույնպես չկան. բնականաբար պետք է հենվենք երկրորդական թվացող փաստերի վրա:

ա) **Գինի** բառը ՆՏԸ-ն մեկնում է «Բեր որթոյ կամ այգոյ. արիւն խաղողոյ. քաղցու կամ խազմուզ ինքնին եռացեալ...»: Ուշադրության արժանի է «Բեր որթոյ կամ այգոյ» բացատրությունը, որից փրամաբանորեն ենթադրելի է՝ այգու կամ վազի բերքը գինին չէ, այլ՝ խաղողը:

բ) Ե. դ. մատենագրությունից բաղված հեթեյալ օրինակներում **գինին** դարձյալ վերաբերում է **խաղող** հասկացությանը. «Եւ զամենայն արեւելեան եւ գիւսիսային եւ գիւսարային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերպօք, եւ սաղարթիք ծառոց վարսատրաց, զանազանալք ի պտուղս եւ ի փրեւս եւ բազում բազմաբերս եւ գինեբերս ի նմա փոկեաց ովիւր» (Խոր., I, ԺԶ, 53)²⁴:

Գինեբեր բառը վստահորեն կարելի է փոխարինել «խաղողաբեր»-ով. այդ է հուշում նաեւ **զանազանալք ի պտուղս** կապակցությունը:

Նմանաբնույթ օրինակ ունի Եղիշեն. «Չորացան ազազեցան բուրաստանք, ծաղկոցաց նոցա, եւ փաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա» (Եղիշեն, 201)²⁵: Մեկ օրինակ էլ բերենք Աստվածաշնչից. «Եւ զամենայն պտուղ իւղոյ եւ զամենայն պտուղ գինոյ եւ ցորենոյ, զոր փացեն Տեառն զպտուղ իւրեանց, քեզ եպու զայն» (Թ-իւր ԺԸ, 12), ռուս. «Все лучшее из елєя и все лучшее из винограда и хлеба, начатки их, которые они дают Господу, я отдал тебе»:

Չանդրադառնալով **գինի** բառի ստուգաբանությանը (բնիկ հայերեն, հ.- ե. ծագման փաստը անառարկելի պետք է համարել)՝ ենթադրություններ կան նախնական **գին** արմարի գոյության մասին. գրաբարյան որոշ կազմություններ, եթե դրանք ձեռագրական աղավաղումներ չեն, այդ են հաստատվում. **գինոյր** «գինու հոյր ունեցող», **գինուրթին** «գինաբբություն», **գինարբու**, **գինաւէր** (կա եւ գինուէր):

Գինի բառի մեջ -ի ածանցի գոյությունը ընդունում է եւ Գ. Զառուկյանը. «Վաղնջահայերենում այն եղել է դեռեւս գործուն եւ արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեւեւ պահպանվել են ածանցելի եւ ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ ալի-ք, աղաւնի, աղ-ալ-իք, այգի, անդի... գինի»²⁶:

24 Մովսէս Խորենացի, Պարմութիւն Նայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբելեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանախանութիւն, լրացումները Ա. Սարգսեանի, Երևան, 1991:

25 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Նայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդապոթեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ Ե. Տէր- Միլնասեան, Երևան, 1957:

26 Տե՛ս Գ. Զառուկյան, նշվ. աշխ., էջ 231:

2. **Որթ** բառի ստուգաբանությանը արդեն անդրադարձել ենք, ինչ վերաբերում է բառիմաստին, ապա ՆՏԲ-ն ևս Առձեռն բառարանը²⁷ «խաղող» իմաստը չեն նշում, իսկ Արմ.-ը Գ. Մազիարտսից բաղված «ճաշէին յորթ, ի հաց և ի կոգի» նախադասության մեջ իրավացիորեն արձանագրում է **որթ** «խաղող» իմաստը: Այդ իմաստը նշում է ևս Գ. Ջահուկյանը²⁸:

Ս. Գրքից բաղված հետևյալ օրինակում **որթ**-ը դարձյալ «խաղող» իմաստով է գործածված. «Եւ եղիցին սփիւք քո իբրեւ գողկոյզս որթոյ» (Երգ. Լ: 8), ռուս. **«И груди твои были бы вместо кистей винограда»**:

3. **Այգի**-ն նախապես ունեցել է միայն «խաղողի այգի» իմաստը: Արմ.-ում **այգի**-ն դիպում է որպես «խաղողային» հասկացություն. 1. «խաղողի այգի», 2. «խաղողի որթ»:

«Արդի հայերէնի մէջ, - գրում է Նր. Աճառյանը, - արեւմտեան գրականում այգի պահել է իր բուն նշանակութիւնը, իսկ արեւելեան գրականում նշանակում է ընդհանրապէս «պարտէզ»»²⁹:

Այգի բառի նախնական իմաստն ակնառու է դառնում հայկապալես Ս. Գրքի հայերէն և այլ լեզուների որոշ հապավածների համեմատությունից. հմմտ. «Եւ զանդս ձեր և զայգիս ձեր և զձիթենիս ձեր զագնիս՝ առցէ» (Ա. Թագ. Ը, 14), ռուս.՝ **«И поля ваши и виноградные и масличные сады ваши лучшие возьмет»**: «Երկիր... այգեաց հացի, երկիր ձիթենեաց իւղոյ և մեղու» (Դ. Թագ. ԺԸ, 32): «Եհար կարկրի զայգիս նոցա և զթզենիս նոցա եղևամբ» (Սաղմ. ՆԷ. (ՆԸ.) 47), ռուս.՝ **«Виноград их побил градом и сикоморы их- льдом»**:

Ուշադրության արժանի է մի հանգամանք եւս. այլ փեսակի այգիները (ոչ խաղողի) գրաբարում արտահայտվում են **բուրաստան, դրախտ, պարտէզ...** բառերով. «Եւ եհան արձակեաց զնա... ի **դրախտ** անտի» (Մանգ. Գ. 23):

«Եւ իբրեւ **գրուրաստանս** առ գևտովք» (Թխր ԻԴ. 6): Ընդգծված բառերի հուն. համապատասխանը Παράδεισος-ն է, իսկ ռուս.՝ **сады** (առանց **виноградный** ածականի):

ԺԳ. դարում վկայված ներքոհիշյալ օրինակում **այգին** հաստատապես «խաղող» իմաստն ունի. «Ի միում փեղոջէ ջամբէ բնութիւնն այգոյ բաղցրութիւն և լուծութիւն»³⁰: Բնագրի ռուսերեն թարգմանությունը՝ **«Природа из общего источника дает винограду сладость»**³¹:

Սփ. Մալխասյանի բառարանում վկայված **այգեռուպ** «խաղողի հյութից պարբասրված դռշար, ռուպ» բառի **այգ(ի)** բաղադրիչը «խաղող» իմաստն ունի:

27 «Առձեռն բառարան հայկազենան լեզուին», Վենետիկ, 1865:

28 Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 184:

29 Տե՛ս Արմ., **Այգի** բառահոգվածը:

30 Տե՛ս **Իշոխ**, Գիրք ի վերայ բնութեան, աշխատ.՝ Ս. Վարդանյանի, Երևան, 1979, էջ 89:

31 Անդ:

Այգի բառով գրաբարում առկա են փասնյակ կազմություններ, որոնք վերաբերում են «խաղող» հասկացությանը. **այգաւէր, այգեգործ, այգեգործութիւն, այգեթաղ, այգեկիթ(ք), այգեկութ(ք), այգեստան, այգեւեք** եւ այլն:

Այգի բառի հ.-ե. ծագումը վիճարկելի չէ³²: Նր. Աճառյանը **այգի** բառի արմատը համարում է * **այգ** «խաղող», իսկ **-ի**-ն ծառանուններից բխող ածական: Այս ենթադրությունները հաստատվում են վերը բերված եւ նման օրինակներով: Կարելի է ենթադրել, որ վաղնջահայերենում **այգ(ի), որթ, գին(ի)** բառերը ունեցել են եւ «խաղող» իմաստը:

Ն.-ե. ծագումով այդ բառերի «խաղողային» բնույթը կողմնակիորեն կարող է հաստատվել Նայաստանի փարաձքում խաղողագործության եւ գինեգործության զարգացման հազարամյա ակունքների հավաստիությունը:

Կարելի է ենթադրել նաեւ, որ «խաղող» իմաստով գործածված **այգ(ի), որթ, գին(ի)** բառերը վաղնջահայերենում եղել են հայերենի փարաձքային փարբերակներ կամ գործառնել են ժամանակագրային փարբեր կտրվածքներում:

Խաղող բառը, ըստ երևույթին, հայերենում գործառնել է ավելի ուշ՝ աստիճանաբար դառնալով համապարասխան հասկացության հիմնական արտահայտիչը գրաբարում եւ հայերենի հեղափոխությունը:

32 Տե՛ս նաեւ, **Այգի** բառափոխվածք. **Գ. Զահուկյան**, Նայերեն սրուգաբանական բառարան, էջ 48:

СОДЕРЖАНИЕ

ИЕРОМОНАХ ШАГЕ АНАНЯН – Вифлеем и мы.....	3
--	---

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Послание Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в связи с Новым годом.....	6
--	---

Проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в связи с праздником Св. Рождества и и Богоявления.....	8
--	---

ОФИЦИАЛЬНОЕ

Поздравительные письма и телеграммы в связи с Чудодейственным и Святым Рождеством Спасителя.....	11
--	----

Католикос Всех Армян принял премьер-министра Грузии.....	12
--	----

Католикос Всех Армян принял делегацию Межгосударственного Фонда гуманитарного сотрудничества стран СНГ.....	13
---	----

ПРОПОВЕДИ

Проповедь епископа Геворга Сарояна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина в связи с праздником св. Стефана Предтечи и рукоположением в диаконы.....	15
---	----

Проповедь архимандрита Месропа Парсамяна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина в связи с праздником наречения нашего Господа и Спасителя Иисуса Христа.....	19
--	----

Проповедь епископа Вртанеса Абраамяна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина в связи с 21ю-летьем Армянской армии.....	23
--	----

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

ДЬЯКОН ГОР ТАРВЕРДЯН – Догматические брожения в Армении в VI-VII вв.....	26
---	----

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- ГЕНРИК АЙВАЗЯН** — Армяно-албанские церковные взаимоотношения в VI в.....39
- ИЕРОМОНАХ ЗАКАРИЯ БАГУМЯН** — Архимандрит Киракос Ерзнкаци о грехе.....55
- КАРАПЕТ АКОПЯН** — Проблема армяно-болгаро-македонского сотрудничества в 1895-1907 гг.....66

СООБЩЕНИЯ

- МАРИАННА АПРЕСЯН** — Армянские редакции жития патриарха Св. Иоанна Постника.....83
- ЛАВРЕНТИЙ ОВАНЕСЯН** — Архаичные названия семантического поля “виноград”.....86
- НОРАЙР КАЗАРЯН** — Чаренц и средневековые.....94
- ФРИНА БАБАЯН** — Монастырский комплекс Св. Саргиса в Уши и Воскан Ерванци.....104
- КАРЕН ПАХЛЕВАНЯН** — Генерал-губернатор Михаил Эбелов.....110

ДУХОВНЫЕ ЧТЕНИЯ

- ИЕРОМОНАХ ШАГЕ АНАНЯН** - Суррогатное материнство в свете христианской морали.....118
- ИЕРЕЙ ГЕВОНД МАИЛЯН** - Новые вызовы.....126

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- КАРЕН МАТЕВОСЯН** — Дополнения в рукописных списках Хроники Самвела Анеци.....130

ЦЕРКОВНАЯ ЖИЗНЬ. НОВОСТИ.....140

CONTENTS

REV. FR. SHAHE ANANYAN – Bethlehem and we.....	3
---	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the New Year.....	6
---	---

Address of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Holy Nativity and Theophany of our Lord Jesus Christ.....	8
--	---

OFFICIAL

Letters and telegrams of greetings and best wishes on the occasion of the glorious Feast of Holy Nativity and Theophany of our Savior.....	11
--	----

Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Prime Minister of Georgia.....	12
---	----

Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the delegation of the CIS Interstate Foundation for Humanitarian Cooperation.....	13
--	----

SERMONS

Sermon delivered by His Grace Bishop Gevorg Saroyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the Feast of St. Stephen the Protomartyr and deacons' ordination.....	15
--	----

Sermon delivered by Archimandrite Mesrop Parsamyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the Feast of the Holy Name of our Lord Jesus Christ.....	19
--	----

Sermon delivered by His Grace Bishop Vrtanes Abrahamyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the 21 st anniversary of the Armenian Army.....	23
---	----

RELIGIOUS STUDIES

DEACON GOR TARVERDYAN – Dogmatic ferments in Armenia in the 5 th - 7 th centuries	26
--	----

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

HENRIK SVAZYAN – Armenian-Albanian ecclesiastical relations in the 6 th century.....	39
REV. FR. ZACHARIA BAGHOUMYAN - On sins by Archimandrite Kirakos of Yerzenka.....	55
KARAPET HAKOBYAN - The issue of the Armenian-Bulgarian-Macedonian cooperation from 1895 to 1907.....	66

ESSAYS

MARIANNA APRESYAN – Armenian editions of the life of Patriarch St. Hovhannes Pahetsogh.....	83
LAVRENTY HOVHANNISYAN – On the old names of the semantic field of the concept of “grapes”	86
NORAYR GHAZARYAN – Charents and the Middle Ages.....	94
FRINA BABAYAN – St. Sarkis monastic complex of Ushee and Vosskan of Yerevan.....	104
KAREN PAHLEVANYAN - Governor-general Mikhail Ebelov.....	110

SPIRITUAL READINGS

REV. FR. SHAHE ANANYAN – Surrogacy in the light of Christian morality.....	118
FR. GHEVOND MAYILYAN – New challenges.....	126

LITERARY REVIEW

KAREN MATHEVOSYAN – Additions in the chronicle manuscripts by Samvel of Ani....	130
BRIEF CHURCH NEWS	140

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տ. ՇԱՆԵ ԱԲԴ. ԱՆԱՆՅԱՆ - Բեթղեհեմը եւ մենք.....	3
---	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով.....	6
--	---

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պարզամը Զրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածյայրության փօնի առիթով.....	8
---	---

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Փրկչի հրաշափառ եւ Սուրբ Ծննդյան փօնի առթիվ ողջույնի եւ բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը.....	11
--	----

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի վարչապետին.....	12
--	----

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների Հոմանիստար համագործակցության միջ-պետական հիմնադրամի պապիիրակությամբ.....	13
---	----

ՔԱՐՈՋԻՍՏԱԿԱՆ

Տ. Գևորգ եպս. Սարոյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Սյուրխանու Նա-խավկայի փօնի եւ սարկավագական ձեռնադրության առիթով.....	15
---	----

Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մեր Տեր եւ Փրկչի Հիսուս Զրիստոսի անվանակոչության փօնի առիթով.....	19
--	----

Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Հայոց բանա-կի 21-րդ ամյակի առիթով.....	23
---	----

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՈՌ-ՍՐԿ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ - Դավանաբանական խմբումները Հայաստանում Զ.-Է. դդ.....	26
--	----

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ - Նայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները Զ. դարում.....	39
Տ. ԶԱԲԱՐԻԱ ԱԲՂ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Կիրակոս վարդապետ Երզնկացին մեղքերի մասին.....	55
ԿԱՐԱՊԵՏ ՆԱԿՈԲՅԱՆ - Նայ-բուղար-մակեդոնական համագործակցության խնդիրը 1895-1907 թթ.....	66

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ - Ս. Նովիաննես Պաեցուղ պարբերականի վարքի հայկական խմբագրությունները.....	83
ԼԱՎՐԵՆՏԻ ՆՈՎՆԱՆԻՍՅԱՆ - «Խաղող» հասկացության իմաստային դաշտի եին անվանումների շուրջ.....	86
ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ - Չարենցը եւ միջնադարը.....	94
ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ - Ուշիի Ս. Սարգիս վանական համալիրը եւ Ոսկան Երեսանցին.....	104
ԿԱՐԵՆ ՓԱՆԼԵԻՄՆՅԱՆ - Գեներալ-նահանգապետ Սիխայիլ Էբելով.....	110

ՀՈԳԵԻՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Տ. ՇԱՆԵ ԱԲՂ ԱՆԱՆՅԱՆ - Փոխնակ մայրության երեսույթը (SURROGACY) քրիստոնեական բարոյականության լույսի ներքո.....	118
Տ. ՂԵՐՈՆԴ-ՔՆՆ. ՄԱՅԻՆՅԱՆ - Նոր մարտահրավերներ.....	126

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵԻՈՍՅԱՆ - Լրացումներ Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերում.....	130
ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ.....	140

ԴԱՍԻՉ՝ 77764

ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՅԷՆ՝
ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱԴԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԴԱՐՇԱԳՈՍ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ
«ԷՋՄԻԱՇԻՆ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review «Etchmiadzin».

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am

Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com **կամ** etchmiadzinarsagir@gmail.com

Նոմ. (+374-10) 517-296/174

Ստորագրում է փապարություն՝ 06. 01. 2013թ.

Չափեր՝ 70x100 1/16: Ծավալը՝ 10 փպ. մամուլ: Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆԻ ՏՊԱՐԱՆ